

Երևան քաղաքում  INTERCONTINENTAL
հյուրանոցային համալիրով Միջազգային բիզնես
կենտրոնի ճարտարապետական կոնցեպցիայի
մշակման վերաբերյալ բաց միջազգային մրցույթի
ծրագիրը և պայմանները

Ծրագրի ղեկավար՝ Լևոն Վարդանյան, ճարտարապետ

Բովանդակություն

1. Ընդհանուր դրույթներ.....
2. Մասնակցությունը մրցույթին
3. Մրցույթի մասնակիցների գրանցումը.....
4. Նախագծման առաջադրանքներ.....
5. Ներկայացվող նյութերի ցանկը.....
6. Գաղտնիությունը.....
7. Նախագծերի ներկայացումը մրցույթին.....
8. Մրցանակները.....
9. Ժյուրի.....
10. Մրցույթի ավարտը.....
11. Մրցույթի ժամանակացույցը.....
12. Հավելված-1.....
13. Հավելված-2.....

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Մրցույթը հայտարարվում է «Ավանգարդ Մոթորս» ընկերության կողմից Երևանի քաղաքապետարանի և Հայաստանի Հանրապետության Ճարտարապետների Միության հետ համատեղ՝ Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության նախարարության, Հայաստանի Հանրապետության Սփյուռքի նախարարության և Ճարտարապետների Միությունների Միջազգային Ասոցիացիայի (ՃԱՄԱ) մասնակցությամբ:

Մրցույթը կազմակերպված է ՅՈՒՆԵՍԿՈ-ՃԱՄ կանոններին համապատասխան և հաստատված է Ճարտարապետների Միջազգային Միության (ՃԱՄ) կողմից:

1.2 «Ավանգարդ Մոթորս» ընկերությունը հանդիսանում է “Daimler AG”-ի գլխավոր ներկայացուցիչը Հայաստանում:

1.3 Մրցույթի նպատակը նոր, յուրօրինակ քաղաքաշինական, ինչպես նաև ճարտարապետական և ֆունկցիոնալ-կոնցեպտուալ լուծումների ձեռքբերումն է, որոնք պետք է ընդգծեն լանդշաֆտի յուրահատկությունները՝ ձևավորված ճարտարապետա-քաղաքաշինական միջավայրում:

1.4 Մրցույթի կազմակերպիչն է «Ավանգարդ Մոթորս» ընկերությունը:

Հասցե՝ Հայաստան, 0062, ք. Երևան, Գ-այի պողոտա 14/3:

Հեռ.՝ +374 10 66 80 00, **ֆաքս**՝ +374 10 66 89 00

Էլ. փոստ՝ agm@mercedes-benz.am

Կայք՝ www.mercedes-benz.am

1.5 Մրցույթի կազմկոմիտեի նախագահ՝ Տիգրան Պռոշյան «Ավանգարդ Մոթորս» ՍՊԸ-ի Տնօրեն

1.6 Մրցույթի ծրագիրը և պայմանները համապատասխանում են լավագույն ճարտարապետական (քաղաքաշինական) նախագծի վերաբերյալ մրցույթների անցկացման կանոններին և մշակված են համաձայն Հայաստանի Հանրապետությունում ճարտարապետական մրցույթների անցկացման Կանոններին և Ճարտարապետության և քաղաքաշինության ոլորտում մրցույթների անցկացման ՅՈՒՆԵՍԿՈ-ի երաշխավորություններին:

1.7 Մրցույթի կազմակերպման վայրը և մասնակիցների աշխատանքների ցուցահանդեսը տեղի կունենա հետևյալ հասցեով՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Արգիշտի 7, «Մոսկվայի Տուն» հեռ. +374 10 510 211:

2 Մասնակցությունը մրցույթին

2.1 Մրցույթը միջազգային է, բաց և անցկացվում է մեկ փուլով:

2.2 Հրավիրվում են մասնակցելու՝

- ճարտարապետներ՝ ամբողջ աշխարհից, անհատ կամ թիմով, որոնք իրավունք ունեն իրականացնելու ճարտարապետական գործունեություն,
- կազմակերպություններ, որոնք ունեն ճարտարապետական գործունեություն իրականացնելու լիցենզիա:

2.3 Գրանցման համար անդամավճար չի պահանջվում:

2.4 Մրցույթի մասնակիցները մրցութային նախագիծն իրագործելիս կարող են ներգրավել այլ ճարտարապետների և հարակից մասնագիտությունների մասնագետների մրցույթի պայմանները կատարելու համար:

2.5 Մրցույթի կազմակերպիչների ներկայացուցիչները, գործընկերները և վարձու աշխատողներն ու ժյուրիի անդամները իրավունք չունեն մասնակցնել մրցույթին և խորհուրդներ տալ մասնակիցներին:

3 Մրցույթի մասնակիցների գրանցումը

3.1 Մրցույթի մասնակիցները գրանցվելու համար պետք է ներկայացնեն դիմում՝ որպես մրցույթի մասնակից, հետևյալ էլեկտրոնային փոստով concept@mercedes-benz.am, որում պետք է նշված լինի՝

- անհատի կամ թիմի ներկայացուցչի անունը, հայրանունը և ազգանունը,
- կազմակերպության անվանումը,
- կազմակերպության ներկայացուցչի անունը, հայրանունը և ազգանունը,
- կազմակերպության հիմնադրման ամսաթիվը (կազմակերպությունների համար) կամ ծննդյան ամսաթիվը (անհատների համար)
- ճարտարապետական գործունեություն իրականացնելու իրավունքը հավաստող փաստաթղթի անվանումը, համարը և տրման ամսաթիվը (կազմակերպությունների համար), ճարտարապետական բուհն ավարտելու վերաբերյալ դիպլոմի կամ մասնագիտական լիցենզիայի անվանումը, համարը և տրման ամսաթիվը (անհատների համար),
- փոստային հասցեն, հեռախոսի համարը, ֆաքսը և էլ. փոստը:

3.2 Մրցույթի կազմկոմիտեն 3.1. կետում նկարագրված դիմումի հիման վրա հաստատում է մրցույթի մասնակիցների գրանցումը և ուղարկում է յուրաքանչյուր մասնակցին մրցութային փաստաթղթերի փաթեթ:

3.3 Դիմումների ներկայացման ժամկետի սկիզբն է 2009թ.-ի հոկտեմբերի 08-ը:

3.4 Դիմումների ներկայացման ժամկետի ավարտն է 2009թ.-ի նոյեմբերի 09-ը:

3.5 Պաշտոնապես, մրցույթի գրանցված մասնակիցը մրցույթի կազմակերպչի կողմից դիտվելու է որպես ներկայացվող մրցութային նախագծի հեղինակ կամ հեղինակային խմբի ղեկավար:

3.6 Մրցույթի գրանցված մասնակիցները կարող են մինչև 2009թ.-ի նոյեմբերի 25-ը մրցույթի կազմկոմիտեին գրավոր ուղղել հարցեր՝ կապված մրցույթի ծրագրի և պայմանների հետ:

4 Նախագծման առաջադրանք

4.1 Մրցութային նախագծի ճարտարապետական կոնցեպցիայի մշակումը պետք է հաշվի առնի առաջարկվող հատվածի գերիշխող դիրքը քաղաքի քաղաքաշինական մասում: Առաջարկվող ճարտարապետական կոնստրուկցիան քաղաքի բոլոր կետերից պետք է հանդես գա որպես գլխավոր ճարտարապետական եզրափակում: Տարածքը տեսանելի է ինչպես քաղաքի ստորին հարթությունից, այնպես էլ վերին ամֆիթատրոնից, որոնք նկարագրում են այն ողջ պարագծով:

4.2 Առաջարկվող բազմաֆունկցիոնալ համալիրը իր արտահայտչականությամբ պետք է հանդես գա որպես կարևորագույն քաղաքաշինական էլեմենտ և վերջնական շեշտադրություն քաղաքի՝ դեպի իրեն կողմնորոշված մայրագծերում:

4.3 Կառուցապատման տարածքն իրենից ներկայացնում է դեպի վեր խոյացող հարթություն 4,4 հա մակերեսով՝ շրջապատված տրանսպորտային մայրուղիներով, որից բացվում է հարավից բիրիական Արարատ լեռով ավարտվող տեսարան դեպի քաղաքի կենտրոն:

4.4 Համալիրի գերիշխող առանցքային ուղղությունը հանդիսանում է Տերյան փողոցը (տես քաղաքի գծագիրը), որի ուղղությամբ ցանկալի է շեշտել հյուրանոցի ուղղահայաց ծավալը:

4.5 Հյուրանոցային համալիրի մշակումը պետք է իրագործել **InterContinental** հյուրանոցի պահանջներին համապատասխան, որոնք ներկայացված են հավելված 1-ում: Հյուրանոցային համալիրը անհրաժեշտ է տեղադրել տարածքի հարավային կողմում՝ դեպի քաղաք նայող հյուրանոցային համարների առավելագույն քանակության առկայությամբ: Հյուրանոցի շինությունը, լինելով գերիշխող ճարտարապետական տարր իր տեղադրվածությամբ և ծավալով, կլինի կառուցապատման ամենատեսանելի տարրը:

4.6 Եթե **InterContinental** հյուրանոցային համալիրի նախագծման համար նախատեսված են որոշակի պահանջներ, ապա բիզնես կենտրոնի, բնակելի համալիրի և այլ ճարտարապետական կառույցների նախագծման համար մասնակցին տրվում է լիակատար իրավունք ստեղծագործել տարածքի կառուցապատումը իր սեփական

ընտրությանը և առաջարկին համապատասխան: Կառուցապատման հագեցվածությունը, օբյեկտների քանակությունը, հարկայնությունը, համակարգը և կապը դրանց միջև նույնպես որոշվում է մասնակցի կողմից: Կառուցապատման սեյսմակայունությունը պետք է համապատասխանի 9 բալի Ռիխտերի սանդղակով: Շինության առավելագույն բարձրությունը նախատեսել 101 մետրը:

4.7 Հարկերի մասնագրերում և սխեմատիկ հատակագծերում անհրաժեշտ է ընդգծել ներկայացված ծավալների միջուկը, որը հետագայում կարող է դառնալ հիմք պատվիրատուի կողմից վերջնական բիզնես- ծրագրի ստեղծման համար:

4.8 Մշակել բնակելի կառուցապատում՝ դեպի հարավ կողմնորոշվածությամբ, բարձրակարգ շքասենյակներով և հարմարավետության բոլոր պահանջները հաշվի առնելով: Անհրաժեշտ է համալիր մոտեցում ցուցաբերել արտաքին և ներքին բոլոր ավտոկայանատեղերի ցանցի հարցը լուծելիս՝ նախագծվող շինությունների պահանջներին համապատասխան: Մուտքի տեղը և ելքատեղը մշակել՝ առավելագույնս նվազեցնելով հոսանքների խաչավորումը:

4.9 Նախատեսել հասարակական օգտագործման վայր հանդիսացող բացօթյա և ծածկված մակերեսների կազմակերպման հնարավորությունը:

4.10 Խորհուրդ չի տրվում համալիրների, կառուցապատումների միջև ներքին տարածությունը ծածկել միասնական թաղանթով: Կառուցապատման նախագծում նախատեսել ճարտարապետական ծավալներ. դրանք որպես ցուցահանդեսների տաղավարներ, սրճարաններ, բաց և փակ լողավազաններ և հասարակական օգտագործման այլ սրահներ օգտագործելու համար՝ կանաչ գոտիների և այլ էլեմենտների բարելավման, կազմակերպման առաջարկներով:

4.11 Առաջարկել համալիրի մուտքի ճարտարապետական լուծումը՝ բաց ավտոկայանատեղով: Հատվածի հարավային մասից հենապատերի պահպանումը բողնվում է մասնակցի հայեցողությանը:

4.12 Տարածքում գոյություն ունեցող 4 հարկանի շինությունը պահպանել և հարմարեցնել գրասենյակների համար:

4.13 Պետք է հաշվի առնել, որ քամիների ուղղությունը ձգվում է հյուսիսից դեպի հարավ: Բոլոր առաջարկվող օբյեկտների կողմնորոշվածությունը լուծել Գլխավոր հատակագծին համապատասխան, հատուկ ուշադրություն դարձնել բնակելի կառուցապատմանը:

4.14 Ճարտարապետական կոնցեպցիան պետք է ներկայացվի հայերենով, ռուսերենով կամ անգլերենով (մասնակցի հայեցողությամբ):

4.15 Ներկայացվող աշխատանքների հիմնական չափանիշները՝

- Միջազգային Բիզնես Կենտրոնի (ՄԲԿ) ճարտարապետա-քաղաքաշինական նախագծի ծավալա-տարածական լուծումը,
- գերիշխող համարվող հյուրանոցային համալիրի ճարտարապետական լուծման արտահայտչականությունը և յուրօրինակությունը:

5. Ներկայացվող նյութերի ցանկը

5.1 Մասնակիցների կողմից ներկայացված յուրաքանչյուր նախագիծ պետք է ներառի՝

5.1.1 Իրավիճակային հատակագիծ Մ 1 : 1000

5.1.2 Գլխավոր հատակագիծ Մ 1:500

5.1.3 Ճակատներ Մ 1:300

5.1.4 Չկրկնվող հարկերի հատակագծեր Մ 1:300

5.1.5 Կտրվածքներ Մ 1:300

5.1.6 Ծավալային գծագրեր

5.1.7 Հեռանկարները, արտոնմետրիաները կամ լուսանկարները՝ շինությունների արտաքին տեսքի համակարգչային պատկերը, ներքին դրվագի հատվածները (գրաֆիկան և խորությունը հեղինակի հայեցողությամբ)։

5.1.8 Բացատրագիր՝ ընդունած որոշումների հիմնավորումներով և հիմնական տեխնիկա-տնտեսական ցուցանիշներով՝ մինչև 10 մեքենայագիր էջ: Բացատրագիրը պետք է կազմված լինի «Times Armenian» ֆոնտով և «12» չափով։

5.2 Սիտուացիոն պլանը (5.1.1.) պետք է ներառի՝

- նախագծվող շինությունը և կառուցապատման հատվածը,
- շրջապատող փողոցներն ու ավտոմայրուղիները,

5.3 Ճակատների գծագրերի վրա (5.1.3.) և կտրվածքների գծագրերի վրա (5.1.5.) պետք է ցույց տրվեն առանցքային չափսերը, հարկերի և տանիքի առավել բարձր տարրերի ուղղահայաց նշագծումները, ինչպես նաև շինության ուղղահայաց, թեքված և այլ էլեմենտները:

5.4 Չկրկնվող հարկերի հատակագծերի գծագրերը (5.1.4.) պետք է ներկայացնեն ամբողջական պատկերացում նախագծի ֆունկցիոնալ կազմակերպման, կոնստրուկտիվ գծագրի և ընդունված ծավալա-հատակագծային լուծման վերաբերյալ: Դրանք պետք է ապահովված լինեն բացատրագրով, ինչպես նաև ունենան առանցքային չափսեր և մակերեսներ:

5.5 Բացատրագրում (5.1.8.) պետք է հիմնավորել ճարտարապետական մտահղացման և մրցութային նախագծի ծավալա-հատակագծային լուծման իրականացման օգտագործման նպատակահարմարությունը, ինչպես նաև ներկայացնել նախագծի հիմնական տեխնիկա-տնտեսական ցուցանիշները։

- շինության ընդհանուր մակերեսը և շինարարական ծավալը, այդ թվում նաև ֆունկցիոնալ գոտիներով, ներառելով ստորգետնյա տարածությունը՝ ներկայացված մետրային հաշվառման համակարգով:

5.6 Առաջադրված աշխատանքները կներկայացվեն 80x120սմ չափսի առավելագույնը 5 (հինգ) գծագրատախտակների վրա:

5.7 Յուրաքանչյուր մրցութային նախագիծ ունի անձնական նույնացման կող: Անձնական նույնացման կողը իրենից ներկայացնում է 7 թվի կոմբինացիա՝ 1-ից մինչև 9-ը (թվի բարձրությունը՝ 1 սմ), որոնք ընտրում է մասնակիցը:

Անձնական նույնացման կողը նշվում է նախագծի յուրաքանչյուր էջի վրա՝ վերևի աջ անկյունում՝ 20x70 մմ չափսի ուղղանկյան մեջ, որն ուղղահայաց մասից բաժանված է 7 հավասար բաժինների: Անձնական նույնացման կողը նաև նշվում է Պարզաբանող գրության առաջին թերթի վրա:

5.8 Յուրաքանչյուր մասնակից մրցույթի կազմակերպչի հասցեով պետք է ուղարկի կնքված փակ ծրար, որի արտաքին մասի վրա՝ 20x70 մմ չափսի ուղղանկյան մեջ նշված է անձնական նույնացման կողը: Ծրարի ներսում՝ A-4 ֆորմատի թերթի վրա, նշվում է մրցույթի մասնակցի ազգանունը, անունը, հայրանունը, փոստային հասցեն, հեռախոսի, ֆաքսի համարը և էլ. փոստը: Եթե նախագիծը կատարվել է հեղինակների խմբի կողմից, ապա ծրարը պետք է ունենա առանձին թերթ, որում հեղինակների ստորագրության ներքո նշվում է նրանց միջև մրցանակի տոկոսային բաշխումը:

6. Գաղտնիությունը

6.1 Մրցույթի անցկացման բոլոր փուլերում կապահովվի մասնակիցների լրիվ գաղտնիությունը:

6.2 Այդ նպատակով մրցութային նախագծի նյութերը տրամադրվում են միայն նշանաբանների ներքո, իսկ պարզաբանող գրությունում գծագրերի վրա, և կնքված նշանաբանային ծրարի արտաքին մասում չպետք է լինի ոչ մի տեղեկություն, որը հնարավորություն կտա նույնականացնել մրցույթի մասնակցի անունը:

6.3 Մինչ ժյուրիի կողմից որոշման կայացումը մրցույթի կազմակերպչի հասցեով ստացված նախագծերը չեն հրապարակվելու:

6.4 Ժյուրիի նիստերի ամբողջ ընթացքում անձնական նույնացման կողերը կբողարկվեն հերթական համարով:

7. Նախագծերի ներկայացումը մրցույթին

7.1 Բոլոր մշակված նախագծերը ամբողջական կազմով պետք է ուղարկվեն 2009թ.-ի դեկտեմբերի 20-ից սկսած: Սահմանված ժամկետում ուղարկված են համարվում այն նախագծերը, որոնք ստացվել են մրցույթի կազմակերպչի կողմից մինչև ժամը 18:00-ը՝ 2010թ.-ի հունվարի 15-ին:

7.2 Նախագծին վերաբերող բոլոր նյութերը ուղարկել էլեկտրոնային ձևով՝ Adobe PDF (*.pdf) ֆորմատով կազմակերպչի կողմից նշված FTP սերվերի վրա: Մասնակիցը պետք է concept@mercedes-benz.am էլ. հասցեին ծանուցի FTP սերվերին ուղարկված նյութերի

վերաբերյալ: Նյութերը ստանալուն պես վերջինս կժանուցվի ստացված նյութերի կազմի, ստացման ժամի և ամսաթվի մասին:

7.3 Մրցույթի կազմակերպիչը երաշխավորում է մրցութային նախագծերի՝ ստացված բոլոր նյութերի պահպանվածությունը դրանց քննության և ժյուրիի կողմից որոշում կայացնելու ժամանակահատվածում:

8. Մրցանակները

8.1 Ժյուրիի կողմից ընտրված լավագույն նախագծերին կշնորհվեն հետևյալ մրցանակները՝

- առաջին տեղի համար մրցանակ՝ 70.000 ԱՄՆ դոլար, և փոխադարձ համաձայնության դեպքում, հետագա համագործակցություն նախագծի մշակման մասով,
- երկրորդ տեղի համար՝ 30.000 ԱՄՆ դոլար,
- երրորդ տեղի համար՝ 15.000 ԱՄՆ դոլար:

8.2 Մրցանակային նախագծերի հեղինակները իրավունք չունեն դրանք ներկայացնելու այլ մրցույթներում, առանց կազմակերպչի գրավոր համաձայնության:

8.3 Եթե ներկայացված նախագծերի քանակը յուրաքանչյուր անվանակարգում կլինի հավասար կամ փոքր հայտարարված մրցանակների քանակից, ապա ժյուրին իրավունք ունի չշնորհել բոլոր հայտարարված մրցանակները:

8.4 Մրցույթի կազմակերպիչն օժտված է նախագծային կազմակերպության ընտրության իրավունքով՝ բոլոր բաժիններով աշխատանքային փաստաթղթերի հետագա մշակման համար:

9. Ժյուրի

9.1 Մրցույթին ներկայացված նախագծերի քննության և գնահատման, մրցույթի հաղթողների որոշման համար նշանակված է ժյուրի հետևյալ կազմով՝

Ժյուրիի Նախագահ - կընտրվի ժյուրիի անդամներից՝ առաջին նիստի ընթացքում
Էղվարդ Ավետիսյան, Ավանգարդ Մոթորս ՍՊԸ Նախագահ
Ռուսաստան

Գազիկ Բեգլարյան, Երևանի Քաղաքապետ
Հայաստան

Մկրտիչ Մինասյան, Հայաստանի Հանրապետության Ճարտարապետների
Հայաստան

Միության Նախագահ

Հայաստանի Հանրապետության Վաստակավոր
Ճարտարապետ

Մայրլ Ռոտունդի, ԱՄՆ

ՌօՏօ Արքիթեքս Ինկ Առաջատար Ճարտարապետ

ԷսՍԻԱյ-Արք Պրոֆեսոր

*Մակոտո Վատանաբե,
Ճապոնիա*

ԷյԱյԷյ Ոսկե Մեդալ-2009 մրցանակիր
ԷյԴիԷյՀ Արքիթեքս Ինկ Առաջատար Ճարտարապետ,

Հոսեի Համալսարանի Պրոֆեսոր

*Էնրիկե Սորեխանո,
Իսպանիա*

Նիետո Սորեխանո Ս.Լ. Առաջատար Ճարտարապետ,
Ունիվերսիդադ Եվրոպեա դե Մադրիդ Համալսարանի
Պրոֆեսոր

*Ալեքսանդր Կորբուտ,
Բելոռուս*

Բերլինի Արվեստների Համալսարանի Պրոֆեսոր
Ճարտարապետների Միությունների Միջազգային
Ասոցիացիայի Նախագահ,
Բելոռուսի Հանրապետության Ճարտարապետների
Միության Նախագահ
Ճարտարապետության Միջազգային Ակադեմիայի
Նախագահ

9.2 Կնշանակվեն նաև ժյուրիի 2 պահեստային անդամներ (մեկ հոգի Հայաստանից, մեկ հոգի Եվրոպայից)

9.3 Ժյուրիի պահեստային անդամները մասնակցելու են բոլոր նիստերին՝ առանց ձայնի իրավունքի, որպեսզի անհրաժեշտության դեպքում փոխարինեն որևիցե պատճառով աշխատանքը շարունակելու հնարավորություն չունեցող ժյուրիի գործող անդամին:

Այդ դեպքում, ժյուրիի պահեստային անդամները պաշտոնապես նշանակվում են ժյուրիի դուրս եկած անդամի փոխարեն ժամկետով՝ մինչ մրցույթի անցկացման ավարտը:

9.4 Ժյուրին իր աշխատանքներն իրականացնում է ամբողջական կազմով՝ մասնակիցների կոնֆիդենցիալությունը և անանունությունը պահպանելով:

9.5 Նախագծերի գնահատման ընթացակարգին մասնակցում են ժյուրիի անդամները և քարտուղարը, ընդ որում, մրցույթի հաղթողների որոշման և մրցանակների շնորհման ժամանակ ձայնի իրավունք ունեն միայն ժյուրիի անդամները:

9.6 Ժյուրին պարտավոր է քննության չենթարկել հետևյալ նախագծերը՝

- մրցույթի կազմակերպչի պայմաններում նշված ժամկետից ուշ ուղարկվածները կամ ստացվածները,
- որոնց անանունությունը կանխամտածված խախտվել է. այսպիսի նախագծերը պետք է մնան ժյուրիի աշխատանքի տնօրինության ներքո, սակայն չպետք է քննվեն ժյուրիի աշխատանքի ընթացքում,

- մրցույթի ծրագրի և պայմանների պահանջներին չհամապատասխանողները:

9.7 Մինչ մրցույթի հաղթող մասնակիցների անուններով նշանաբանային ծրարների բացումը՝ ժյուրին կազմում է եզրափակիչ հաշվետվություն քննարկման վերաբերյալ, որը ներառում է տարբեր մրցանակների շնորհման նպատակով ընդունված որոշումների հիմնավորումները: Հաշվետվությունը պետք է ստորագրվի ժյուրիի բոլոր անդամների կողմից:

9.8 Ժյուրիի որոշումը ընդունվում է ձայների մեծամասնությամբ և վերջնական է:

10. Մրցույթի ավարտը

10.1 Արդյունքների հրապարակումից հետո նախագծերը կցուցադրվեն Երևանում «Մոսկվայի Տան» ցուցասրահում, որը բաց է ազատ այցելությունների համար:

10.2 Նշանաբանային ծրարների բացումը տեղի կունենա ժյուրիի վերջնական որոշումից հետո:

10.3 Նշանաբանային ծրարների բացումից հետո ժյուրիի քարտուղարը և կազմկոմիտեի նախագահը տեղեկացնում են արդյունքները հաղթողներին, մնացած բոլոր գրանցված մրցույթի մասնակիցներին, կազմակերպություններին, որոնք համագործակցել են մրցույթի անցկացմանը և զանգվածային լրատվության միջոցներին:

10.4 Մրցանակները մրցույթի հաղթողներին կվճարվեն նշանաբանային ծրարների բացումից հետո 5 օրվա ընթացքում:

10.5 Մրցույթի իրականացման վերաբերյալ յուրաքանչյուր վիճարկում պետք է կանոնակարգվի կոմիտեի կազմակերպչի կողմից: Դիմորդները կտեղեկացվեն որոշման մասին:

11. Մրցույթի կանոնակարգը

- | | |
|---|-----------------------------------|
| 11.1 Մրցույթի հայտարարումը | 2009թ.ի հոկտեմբերի 08 |
| 11.2 Մրցույթում մասնակցելու համար դիմումների գրանցման վերջնաժամկետ | 2009թ.-ի նոյեմբերի 09՝ ժամը 18:00 |
| 11.3 Գրանցված մասնակիցներին մրցութային փաստաթղթերի փաթեթի հանձնման վերջնաժամկետ | 2009թ.-ի նոյեմբերի 13 |
| 11.4 Ծրագրի և պայմանների վերաբերյալ հարցերի ներկայացման վերջնաժամկետ | 2009թ.-ի նոյեմբերի 16 |

11.5 Մրցութային հարցերի պատասխանների տրամադրում	2009թ.-ի նոյեմբերի 23
11.6 Նախագծերի ներկայացման վերջնաժամկետ	2010թ.-ի հունվարի 15, ժամը՝ 18:00
11.7 Կազմկոմիտեի նիստ	2010թ.-ի հունվարի 17-20
11.8 Ժյուրիի նիստ	2010թ.-ի հունվարի 21-23
11.9 Արդյունքների հրապարակում	2010թ.-ի հունվարի 24
11.10 Հաղթողներին մրցանակների հանձնում	2010թ.-ի փետրվարի 1
11.11 Ներկայացված նախագծերի հասարակական ցուցադրում	2010թ.-ի հունվարի 24-30

Կոնտակտային տվյալներ

Բոլոր հարցերով դիմել ծրագրի ղեկավարին

հեռախոս՝ +374 10 66 85 00

ֆաքս՝ +374 10 66 89 00

Էլ. փոստ՝ concept@mercedes-benz.am